

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Քրեական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1904/M02 «Տնտեսական գործունեության դեմ ուղղված
հանցագործություններ»

Որակավորման

աստիճան՝ մագիստրոսի կրթական ծրագիր
(«Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական
ծրագիր)

Կազմեց ՝ իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Տ. Վ. Սիմոնյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՈՒՆ

1904/M02 «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ»

Շաբաթական 2 ժամ (լսարանային ժամ՝ 32, ինքնուրույն աշխատանք՝ 58)

1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատմամբ դասընթաց

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների բովանդակությանը, որակման առանձնահատկություններին, վեր հանել այն հիմնահարցերը և թերությունները, որոնք առկա են այս խումբ հանցակազմերում, ինչպես նաև մշակել դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Կրթական վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա

գիտելիք և իմացություն

- տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների բովանդակությունից և հանցակազմերի կառուցվածքից,

- տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկություններից և այդ հանցակազմերում առկա օրենսդրական բացթողումներից:

Ունակ կլինի

(բուն մասնագիտական կարողություններ)

- վեր հանել այն առավելությունները և թերությունները, որոնք տեղ են տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների օրենսդրական ձևակերպումներում :

- առաջարկություններ ներկայացնել տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների կատարելագործմանը միտված:

- կկարողանա գործնականում ճիշտ որակել քննարկվող հանցակազմերը և իր գիտելիքները կիրառել արդարադատության առավել արդյունավետ կազմակերպմանը միտված:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր, ինչպես նաև եզրափակիչ քննություն, որը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են՝

1-ին քննություն. Բանավոր հարցում: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 2 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 2 միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ քննություն. Գրավոր ստուգում: Գրավոր ստուգումն անց է կացվում ուսանողների ներկայացրած ռեֆերատների հիման վրա և գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն. Բանավոր հարցում: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է հարցատոմս, որը պարունակում է 4 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 2.5 միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մաս 1.

Թեմա 1. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը
(4 ժամ դասախոսություն)

1.Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը, դրանց սեռային, տեսակային օբյեկտը, օբյեկտիվ կողմի, սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները: 2.Տնտեսության ոլորտում հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը, որպես շուկայական տնտեսության բնականոն զարգացման երաշխիք:

Հարցեր 1-2 – Անցկացվում է ներածական դասախոսություն:

Հարց 2 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Лопашенко Н. А. Преступления в сфере экономической деятельности: понятие, система, проблемы квалификации и наказания. Саратов, 1997.
2. Гаухман Л. Д., Максимов С. В. Преступления в сфере экономической деятельности. М., 1998.
3. Уголовное право Российской Федерации, особенная часть. Под. ред Здравомыслова Б. В. М., 1999.
4. Ежов Ю. А. Преступления в сфере предпринимательства. М., 1999.
5. Уголовное право, особенная часть: Учебник под ред. Н. И. Ветрова, Ю. И. Ляпунова М., 1998.

Թեմա 2. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության դեմ
ուղղված հանցագործություններ

(4 ժամ դասախոսություն)

1. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը, հասկացությունը, տեսակները օբյեկտիվ կողմի, և սուբյեկտի առանձնահատկությունները:
2. Ապօրինի ձեռնարկատիրությունը, տեսակները, ծանրացնող հանգամանքները: 3. Կեղծ ձեռնարկատիրությունը, առանձնահատկությունները, նպատակները: 4. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը) փողերի լվացման միջազգային և ներպետական քրեաիրավական կարգավորումը, հանցագործության կատարման եղանակները: 5. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները:
6. Վարկը ոչ նպատակային օգտագործելը, հասկացությունը, առանձնահատկությունները:
7. Հակամրցակցային գործունեությունը, հասկացությունը, կատարման եղանակները, սուբյեկտի առանձնահատկությունները: 8. Առևտրային ապահովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ապօրինի հավաքելը կամ հրապարակելը: Հանցագործության կատարման նպատակը, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, սուբյեկտի առանձնահատկությունները հողվածի տարբեր մասերում: 9. Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպություններին կաշառելը, առանձնահատկությունները, ծանրացնող հանգամանքները: 10. Առևտրային կաշառքը, հասկացությունը, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, ծանրացնող հանգամանքները:

Հարցեր 1-5 – Անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով :

Հարց 5 –10- Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը: Ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, իսկ ուսանողների մեկ այլ խումբ գրախոսում է ներկայացված ռեֆերատները՝ վեր հանելով դրանցում առկա առավելություններն ու բացթողումները, անցկացվում է քննարկում:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Яни П.С. Экономические и служебные преступления. М.: ЗАО «Бизнес-школа «Интел-Синтез», 1997. 208 с.
2. Кернер Х.-Х., Дах Э. Отмывание денег. Путеводитель по действующему законодательству и юридической практике. М., 1996. 257 с.
3. Кругликов Л. Л. Экономические преступления: понятие, виды, вопросы дифференциации ответственности. Ярославль, 2000.
4. Попондуло В. Ф. Яковлева В. Ф. Комерческое право. С. - Петербург, 1998.
5. Экономические преступления (вопросы дифференциации и индивидуализации ответственности и наказания). Учебное пособие. Дулатбеков Н.О., Кругликов Л.Л. Ярославль. Изд-во Яросл. ун-та 2001.
6. Презумпции в уголовном праве (в сфере ответственности за экономические и иные преступления). Зуев Ю.Г., Кругликов Л.Л., Под общ. ред.: Кругликов Л.Л. Ярославль. Изд-во Яросл. ун-та .2000

Թեմա 3. Քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքային իրավունքների խախտման հետ կապված հանցագործություններ

(6 ժամ դասախոսություն)

1.Վարկը ոչ նպատակային օգտագործելը, հանցագործությամբ պատճառված հետևանքների առանձնահատկությունները: 2.Անօրինական գործողությունները սնանկության ընթացքում, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, տեսակները, սուբյեկտի առանձնահատկությունները հողվածի առաջին և երկրորդ մասերում: 3.Կանխամտածված սնանկություն, դրսևորման ձևերը: 4.Կեղծ սնանկություն, հասկացությունը, նպատակը:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2-3 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Клепицкий И.А. Банкротство как преступление в современном уголовном праве // Государство и право. 1997. № 11. С. 36-43.
2. Экономические преступления. Судебно-бухгалтерская экспертиза как метод предупреждения экономической преступности. Учебное пособие. Нафиев С.Х., Хамидулина Г.Р. Москва. Экзамен. 2003.
3. Преступления в сфере экономической деятельности (экономические преступления). Волженкин Б.В. Санкт-Петербург. Юрид. центр Пресс. 2002.
4. Латентные экономические преступления (более 70 типовых способов использования служебного положения в личных целях). Практическое пособие по выявлению и предупреждению экономических преступлений. Каплунова Г.Ю. Москва. 2005.
5. Волженкин Б.В. Преступления в сфере экономической деятельности (экономические преступления). СПб.: Центр Пресс, 2002. 516 с.
6. Волженкин Б.В. Уголовная ответственность юридических лиц. СПб: Юридический институт Генеральной прокуратуры РФ, 1998. 40 с.

Թեմա 4. Առևտրային և այլ գործարքների օրինական կարգի դեմ ուղղված հանցագործություններ

(6 ժամ դասախոսություն)

1. Ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը, ապրանքային և առևտրային նշանի, ֆիրմային անվանման հասկացությունը, հանցագործության օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, շարժառիթներն ու նպատակները: 2. Կեղծ գովազդը, հասկացությունը, առարկան, ծանրացնող հանգամանքները:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը: Վերլուծության են ենթարկվում պրակտիկ օրինակներ:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Гаухман Д. Хозяйственные преступления. М.: НИиРИО Моск. ин-та МВД России, 1995. 94 с.
2. Гаухман Л.Д., Максимов С.В. Преступления в сфере экономической деятельности. М.: ЮрИнфоР, 1998. 296 с.
3. Горелик А.С., Шишко И.В., Хлупина Г.Н. Преступления в сфере экономической деятельности. Красноярск, 1998. 435 с.
4. Гришко А .Я., Потапов А.М. Амнистия. Помилование. Судимость. М.: Университетская книга, 2010. 288 с.
5. Клепицкий И.А. Система хозяйственных преступлений. М.: Статут, 2005. 572 с.

Մաս 2

Թեմա 5. Արժեթղթերի, փողերի կամ վճարային փաստաթղթերի օրինական շրջանառության կարգի դեմ ուղղված հանցագործություններ

(4 ժամ դասախոսություն)

1.Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը: Հասկացությունը, առանձնահատկությունները, ծանրացնող հանգամանքները: 2.Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը, հանցագործության առանձնահատկությունները, տարբերությունը կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելուց կամ իրացնելուց, ծանրացնող հանգամանքները: 3.Չարաշահումը արժեթղթեր թողարկելիս, օբյեկտիվ կողմը, սուբյեկտի առանձնահատկությունները:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2 –3 Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը: Ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, իսկ ուսանողների մեկ այլ խումբ գրախոսում է ներկայացված ռեֆերատները՝ վեր հանելով դրանցում առկա առավելություններն ու բացթողումները:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Клепицкий И.А. Уголовно-правовая охрана инвестиций на рынке ценных бумаг// Законодательство. 2004. № 1. С. 65-75.
2. Кобзева Е.В. Теория оценочных признаков в уголовном законе / Науч. ред. Н.А. Лопашенко. М.: Юрлитинформ, 2009. 264 с.
3. Козочкин И.Д. Уголовное право США: успехи и проблемы реформирования. СПб.: Изд-во Р. Асланова «Юридический центр Пресс», 2007. 478 с.
4. Кругликов Л.Л., Соловьев О.Г., Грибов А.С. Экономические преступления в бюджетной и кредитно-финансовой сферах: вопросы законодательной техники и дифференциации ответственности. Ярославль: Яросл. гос. ун-т, 2008. 232 с.

Թեմա 6. Հարկերի և այլ պարտադիր վճարումների վճարման օրինական կարգի խախտման հետ կապված հանցագործություններ

(4 ժամ դասախոսություն)

1. Հարկերը, տուրքերը, այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելը, հանցագործության հասկացությունը, սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները:
2. Ակցիզային դրոշմանիշները կեղծելը կամ իրացնելը, հանցագործության օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, ծանրացնող հանգամանքները: 3. Ակցիզային

դրոշմանիշներ օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով ապրանքների դրոշմավորելը, հանցագործության սուբյեկտի առանձնահատկությունները հողվածի տարբեր մասերում, ծանրացնող հանգամանքների առանձնահատկությունները:

4. Ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը: 5. Ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնները խախտելը, նշված կանոնների առանձնահատկությունները, դրանց խախտման հետևանքով պատճառվող վնասի չափը, հանցագործության օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները:

Հարցեր 1-4 – Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2 – 5 Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Вагнер А. Налоговые преступления: пределы ответственности. Законодательный и судебный опыт ФРГ // Налоговые преступления: пределы ответственности. Материалы бизнес-форума. М., 2005. С. 45-53.
2. Волженкин Б.В. К вопросу о совершенствовании законодательства об ответственности за преступления в сфере экономической деятельности // Налоговые и иные экономические преступления / Под ред. Л.Л. Кругликова Вып. 2. Ярославль, 2000. С. 23-32.
3. Волженкин Б.В. Некоторые вопросы общей характеристики преступлений в сфере экономической деятельности по УК РФ // Актуальные проблемы науки и практики коммерческого права. Вып. 5: Сб. науч. статей. СПб., 2005. С. 72-78.
4. Келина С.Г. Уголовная ответственность юридических лиц в проекте нового УК Российской Федерации // Уголовное право: новые идеи / Отв. ре. С.Г. Келина, А.В. Наумов. М., 1994. С. 50-60.

Թեմա 7. Սպառողների օրհանակալան շահերի դեմ ուղղված հանցագործություններ

(4 ժամ դասախոսություն)

1.Սպառողներին խաբելը, առանձնահատկությունները, օբյեկտիվ կողմի դրսևորման ձևերը, ծանրացնող հանգամանքները: 2.Վաշխատությունը, առանձնահատկությունները, համեմատումը ստրկացուցիչ գործարքի հետ, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները: 3.Մաքսանենգությունը, որպես արտաքին տնտեսական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործություն, դրա վտանգավորությունը, օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, հողվածի երրորդ մասով սահմանված հատուկ սուբյեկտի առանձնահատկությունները:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2–3 Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում քննարկում խնդրահարույց հարցերը: Ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, իսկ ուսանողների մեկ այլ խումբ գրախոսում է ներկայացված ռեֆերատները՝ վեր հանելով դրանցում առկա առավելություններն ու բացթողումները, անցկացվում է քննարկում:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Кругликов Л.Л., Дулатбеков Н.О. Экономические преступления (вопросы дифференциации и индивидуализации ответственности и наказания): Учеб. пособие. Ярославль: ЯрГУ, 2001. 159 с.
2. Контрабанда и иные экономические преступления в таможенной сфере. Учебно-методическое пособие. Моденов А.К. Санкт-Петербург. ИНТАН. 2001.
3. Волженкин Б.В. К вопросу о совершенствовании законодательства об ответственности за преступления в сфере экономической деятельности // Налоговые и иные экономические преступления / Под ред. Л.Л. Кругликова Вып. 2. Ярославль, 2000. С. 23-32.

1-ին քննության հարցաշար

1. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը
2. Ապօրինի ձեռնարկատիրությունը
3. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (լեգալացնելը)
4. Հակամրցակցային գործունեությունը
5. Առևտրային կաշառք
6. Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը
7. Հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը
8. Սպառողներին խաբելը
9. Վաշխառությունը
10. Մաքսանենգությունը
11. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը

Ինքնուրույն աշխատանքի (58 ժամ) ուղեցույց

Ուսանողը գիտական աշխատանք է ներկայացնում հնարավորինս իր մագիստրոսական թեզին առնչվող թեմայով կամ մեկ այլ՝ իր համար նախընտրելի թեմայով: Կատարված աշխատանքը թղթային տարբերակով ինչպես նաև էլեկտրոնային կրիչի վրա ներկայցվում է ամբիոն: Աշխատանքի ձևավորման պահանջներն են.

- . տառատեսակ՝ հայերենը՝ Silfaen Unicode
- . ռուսերենը և եվրոպական այլ լեզուները՝ Times New roman
- . տառաչափ՝ 12
- . միջտողային քայքայ՝ 1,5
- . էջադրման չափեր՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1,5 սմ, վերևից և ներքևից 2 սմ
- . էջերի համարակալում՝ ներքևում, կենտրոնում:

Գիտական աշխատանքի ծավալը՝ բուն շարադրանքի հատվածը՝ 10-15 էջ:

Աշխատանքը պետք է ունենա՝

- . տիտղոսաթերթ,
- . բովանդակության ցանկ,
- . բուն շարադրանք,
- . օգտագործված գրականության ցանկ:

Աշխատանքում պարտադիր են այն աղբյուրներին հղումները, որոնք օգտագործվել են աշխատանքը գրելիս:

Աշխատանքի տիտղոսաթերթը պետք է կազմել տվյալների հետևյալ հերթականությամբ՝

- . ԲՈՒՀ-ի, ֆակուլտետի և ամբիոնի ամբողջական անվանումը,
- . դասընթացի անվանումը,
- . դասախոսի անուն ազգանունը և գիտական կոչումը,
- . աշխատանքի վերնագիրը,
- . հեղինակի անուն ազգանունը, կուրսը, էլ. փոստի հասցեն:

Գրավոր աշխատանքների համար առաջարկվող թեմաների ցանկ

1. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը:
2. Օրինական ձեռարկատիրական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ:
3. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականցման հանցատեսակի ներպետական և միջազգային իրավական հիմնախնդիրները:

4. Սնանկացման օրինական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների համեմատական նկարագիրը:
5. Հակամրցակցային գործունեության հանցատեսակի տեսական և գործնական հիմնախնդիրները:
6. Ապրանքային նշանն ապօրինի օգտագործելու և կեղծ գովազդի հանցակազմերի ընդհանուր և տարբերիչ առանձնահատկությունները:
7. Առևտրային կաշառքի հանցակազմի էությունն ու տարբերակումը հարակից հանցակազմերից:
8. Կեղծ փողերի և վճարային փաստաթղթերի շրջանառության հիմնախնդիրները:
9. Հարկային ոլորտին առնչվող հանցատեսակների քրեաիրավական բնութագիրը:
10. Ակցիզային դրոշմանիշերի ապօրինի շրջանառությունը:
11. Վաշխառության տեսական և գործնական հիմնախնդիրները:
12. Մաքսանենգության հանցատեսակի ներպետական և միջազգային իրավական կարգավորումը:

Ուսանողը կարող է նաև գիտական աշխատանք գրել ցանկում տեղ չգտած թեմայով:

Եզրափակիչ քննության հարցաշար

12. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը
13. Ապօրինի ձեռնարկատիրությունը
Առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը
15. Կեղծ ձեռնարկատիրություն
16. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (լեգալացնելը)
17. Վարկը ոչ նպատակային օգտագործելը
Անօրինական գործողությունները սնանկության ընթացքում
19. Կանխամտածված սնանկություն
20. Կեղծ սնանկություն
21. Հակամրցակցային գործունեությունը
22. Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը
23. Ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը
24. Կեղծ գովազդը
25. Առևտրային ապահովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը
26. Առևտրային կաշառք
27. Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը
28. Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը
29. Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը
30. Չարաշահումը արժեթղթեր թողարկելիս
31. Հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը
32. Կեղծ գինի, կեղծ օղի կամ ալկոհոլային կեղծ այլ խմիչք պատրաստելը և իրացնելը
33. Ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը

34. Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը
35. Ակցիզային դրոշմանիշներով և հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելը
36. Սպառողներին խաբելը
37. Վաշխառությունը
38. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը
39. Մաքսանենգությունը
40. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը

«Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ»

դասընթացի համար առաջարկվող ընդհանուր գրականություն

1. ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս: Գ. Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Եր. 2012:
2. Лопашенко Н. А. Преступления в сфере экономической деятельности: понятие, система, проблемы квалификации и наказания. Саратов, 1997.
3. Гаухман Л. Д., Максимов С. В. Преступления в сфере экономической деятельности. М., 1998.
4. Уголовное право Российской Федерации, особенная часть. Под. ред Здравомыслова Б. В. М., 1999.
5. Ежов Ю. А. Преступления в сфере предпринимательства. М., 1999.
6. Уголовное право, особенная часть: Учебник под ред. Н. И. Ветрова, Ю. И. Ляпунова М., 1998.
7. Кругликов Л. Л. Экономические преступления: понятие, виды, вопросы дифференциации ответственности. Ярославль, 2000.
8. Попондуло В. Ф. Яковлева В. Ф. Комерческое право. С. - Петербург, 1998.
9. Экономические преступления (вопросы дифференциации и индивидуализации ответственности и наказания). Учебное пособие. Дулатбеков Н.О., Кругликов Л.Л. Ярославль. Изд-во Яросл. ун-та 2001.
10. Контрабанда и иные экономические преступления в таможенной сфере. Учебно-методическое пособие. Моденов А.К. Санкт-Петербург. ИНТАН. 2001.
11. Презумпции в уголовном праве (в сфере ответственности за экономические и иные преступления). Зуев Ю.Г., Кругликов Л.Л., Под общ. ред.: Кругликов Л.Л. Ярославль. Изд-во Яросл. ун-та .2000.

12. Экономические преступления. Судебно-бухгалтерская экспертиза как метод предупреждения экономической преступности. Учебное пособие. Нафиев С.Х., Хамидуллина Г.Р. Москва. Экзамен. 2003.
13. Преступления в сфере экономической деятельности (экономические преступления). Волженкин Б.В. Санкт-Петербург. Юрид. центр Пресс. 2002.
14. Латентные экономические преступления (более 70 типовых способов использования служебного положения в личных целях). Практическое пособие по выявлению и предупреждению экономических преступлений. Каплунова Г.Ю. Москва. 2005.
15. Волженкин Б.В. Преступления в сфере экономической деятельности (экономические преступления). СПб.: Центр Пресс, 2002. 516 с.
16. Волженкин Б.В. Уголовная ответственность юридических лиц. СПб: Юридический институт Генеральной прокуратуры РФ, 1998. 40 с.
17. Гаухман Д. Хозяйственные преступления. М.: НИиРИО Моск. ин-та МВД России, 1995. 94 с.
18. Гаухман Л.Д., Максимов С.В. Преступления в сфере экономической деятельности. М.: ЮрИнфоР, 1998. 296 с.
19. Горелик А.С., Шишко И.В., Хлупина Г.Н. Преступления в сфере экономической деятельности. Красноярск, 1998. 435 с.
20. Гришко А.Я., Потапов А.М. Амнистия. Помилование. Судимость. М.: Университетская книга, 2010. 288 с.
21. Кернер Х.-Х., Дах Э. Отмывание денег. Путеводитель по действующему законодательству и юридической практике. М., 1996. 257 с.
22. Клепицкий И.А. Система хозяйственных преступлений. М.: Статут, 2005. 572 с.
23. Кобзева Е.В. Теория оценочных признаков в уголовном законе / Науч. ред. Н.А. Лопашенко. М.: Юрлитинформ, 2009. 264 с.
24. Козочкин И.Д. Уголовное право США: успехи и проблемы реформирования. СПб.: Изд-во Р. Асланова «Юридический центр Пресс», 2007. 478 с.
25. Кругликов Л.Л., Соловьев О.Г., Грибов А.С. Экономические преступления в бюджетной и кредитно-финансовой сферах:

- вопросы законодательной техники и дифференциации ответственности. Ярославль: Яросл. гос. ун-т, 2008. 232 с.
26. Яни П.С. Экономические и служебные преступления. М.: ЗАО «Бизнес-школа «Интел-Синтез», 1997. 208 с.
27. Вагнер А. Налоговые преступления: пределы ответственности. Законодательный и судебный опыт ФРГ // Налоговые преступления: пределы ответственности. Материалы бизнес-форума. М., 2005. С. 45-53.
28. Волженкин Б.В. К вопросу о совершенствовании законодательства об ответственности за преступления в сфере экономической деятельности // Налоговые и иные экономические преступления / Под ред. Л.Л. Кругликова Вып. 2. Ярославль, 2000. С. 23-32.
29. Волженкин Б.В. Некоторые вопросы общей характеристики преступлений в сфере экономической деятельности по УК РФ // Актуальные проблемы науки и практики коммерческого права. Вып. 5: Сб. науч. статей. СПб., 2005. С. 72-78.
30. Келина С.Г. Уголовная ответственность юридических лиц в проекте нового УК Российской Федерации // Уголовное право: новые идеи / Отв. ре. С.Г. Келина, А.В. Наумов. М., 1994. С. 50-60.
31. Клепицкий И.А. Банкротство как преступление в современном уголовном праве // Государство и право. 1997. № 11. С. 36-43.
32. Клепицкий И.А. Отмывание денег в современном уголовном праве // Государство и право. 2002. № 8. С. 37-45.
33. Клепицкий И.А. Уголовно-правовая охрана инвестиций на рынке ценных бумаг // Законодательство. 2004. № 1. С. 65-75.
34. Кругликов Л.Л., Дулатбеков Н.О. Экономические преступления (вопросы дифференциации и индивидуализации ответственности и наказания): Учеб. пособие. Ярославль: ЯрГУ, 2001. 159 с.